Տասներորդ հաղորդում

Կառավարող սկզբունքներ, որոնք պետք է տեսնենք և փորձառաբար ապրենք, որպեսզի տիրենք Քրիստոսին՝ որպես բարի երկրի

Գրվածքների ընթերցում. Կոլ 2:6, Ա Կրթ 6:17, 12:12-13, Գրծ 9:3-5, Եկ 13:21-22, Կոլ 4:2

I. «Ուստի ինչպես ընդունեցիք Քրիստոսին՝ Հիսուս Տիրոջը, այդպես Նրա մեջ քայլեցեք»՝ Կոլ 2:6.

Ա. Ինչպես ընդունել ենք Քրիստոսին, այդպես պետք է քայլենք Նրա մեջ. Նրա մեջ քայլել նշանակում է ապրել, գործել, վարվել ու գոյություն ունենալ Քրիստոսի մեջ, որպեսզի վայելենք Նրա հարստությունը, ինչպես Իսրայելի զավակներն էին ապրում բարի երկրում ու վայելում դրա ողջ հարուստ արգասիքը:

Բ. Այսօր բարի երկիրը Քրիստոսն է՝ որպես համաբովանդակ Հոգին (Գղտ 3:14), ով մեր հոգում է բնակվում (Բ Տմթ 4:22, Հռմ 8:16), որպեսզի մեր վայելքը լինի:

Գ. Այն, որ քայլում ենք հոգու համաձայն և Հոգով (Հռմ 8:4, Գղտ 5:16), Նոր Կտակարանի կենտրոնական ու առանցքային միտքն է:

II. Քրիստոսի մեջ քայլելու, այսինքն՝ հոգու համաձայն և Հոգով՝ որպես բարի երկրի իրականությամբ քայլելու համար մենք պետք է տեսնենք, վերածնված եռամաս հավատացյալների և ավարտուն Եռամեկ Աստծու հոգևոր հաղորդակցության բանալին Ա Կրթ 6:17-ն է. «Նա, ով Տիրոջն է միանում, մեկ հոգի է».

Ա. Մենք Հոգի Աստծուն երկրպագում ենք մեր հոգով՝ Հվի 4:24:

Բ. Մենք վերածնվեցինք Աստծուց՝ որպես Հոգուց, որպեսզի հոգի լինենք՝ 3:6:

Գ. Հոգին մեր հոգու հետ վկայում է, որ մենք Աստծու զավակներ ենք՝ Հռմ 8:16:

Դ. Մենք մեր հոգում դառնում ենք Աստծու բնակատեղը, իսկ Հոգին այդ բնակատեղում Ներբնակվողն է՝ Եփս 2:22:

Ե. Տեր Հիսուսը՝ որպես պնևմատիկ Քրիստոսը և որպես կենդանարար Հոգին, մեր հոգում է՝ Բ Տմթ 4:22, Հռմ 8:10:

Զ. Եթե Հիսուսին մեռելներից հարուցանողի Հոգին բնակվում է մեր մեջ, ապա Նա, ով Քրիստոսին մեռելներից հարուցանեց, նաև մեր մահկանացու մարմինները կկենդանարարի Իր Հոգու միջոցով, ով բնակվում է մեր մեջ՝ խ. 11:

Է. Եթե մենք Հոգով սպանենք մարմնի գործերը, կապրենք՝ խ. 13բ:

Ը. Մենք մեր միտքը սևեռում ենք հոգուն, որպեսզի կյանք և խաղաղություն ունենանք՝ խ. 6:

Թ. Նրանք, ովքեր Քրիստոս Հիսուսինն են, խաչել են (Հոգով) մսեղին՝ դրա կրքերով ու տենչանքներով հանդերձ՝ Գղտ 5:24:

Ժ. Երբ մենք Հոգով քայլենք, մսեղիի տենչանքը բնավ չենք կատարի՝ խ. 16:

ԺԱ. Եթե մենք ապրում ենք Հոգով, նաև քայլենք Հոգով՝ խ. 25:

ԺԲ. Մենք հոգու մեջ և ըստ հոգու (միաձուլված հոգու) ենք քայլում (գոյություն ունենում)՝ օրենքի արդարության իրականացման համար՝ Հռմ 8:4:

ԺԳ. Հիսուս Քրիստոսի Հոգու առատ մատակարարման շնորհիվ մենք ապրում ենք Քրիստոսին և մեծարում Նրան՝ Փլպ 1:19բ-21ա:

ԺԴ. Մենք ամեն ժամանակ աղոթում ենք հոգում՝ Եփս 6:18:

ԺԵ. Մենք սրբացվում ենք Հոգու մեջ՝ Հռմ 15:16:

ԺԶ. Մենք Հոգով նորոգվում ենք մեր հոգում՝ Տտս 3:5, Եփս 4:23:

ԺԷ. Մենք Տեր Հոգուց փոխակերպվում ենք Քրիստոսի փառավոր պատկերին՝ Բ Կրթ 3:18:

ԺԸ. Հոգին՝ որպես պատրաստված Եռամեկ Աստված, և հարսը՝ որպես փոխակերպված եռամաս մարդը, ի վերջո դառնում են հոգևոր զույգ՝ աստվածայնության և մարդկայնության միաձուլումը (Հյտ 22:17ա)՝ լինելու համար ավարտունացած Նոր Երուսաղեմը՝ Նրա հավիտենական ընդարձակման և արտահայտության համար՝ փառավորված մարդկայնության մեջ դրսևորվող աստվածային փառքով (21:10-11):

III. Մենք պետք է տեսնենք, որ այն Անձը, ում մեջ պետք է քայլենք, Քրիստոսն է Իր լիակատար սպասավորության երեք փուլերում.

Ա. Աստծու կենտրոնական հայտնությունն Աստծու առաջընթացող հայտնությունն է Աստվածաշնչում. «ամուրի» Աստված, մարմնացած Աստված, փրկագնող Աստված, բաղադրյալ Աստված, ուժեղացված Աստված, ներբնակվող Աստված ու ընդհանրական դարձած Աստված. ընդհանրական դարձած Աստված Քրիստոս-Մարմինն է, որի վերջնական ավարտունությունը «ամուսնացած» Աստված է՝ վերջնականապես ընդհանրական դարձած Աստված՝ Նոր Երուսաղեմը:

Բ. Տիրոջ վերականգնումը Քրիստոսի վերականգնումն է Իր լիակատար սպասավորության երեք փուլերում՝ մարմնացման, ներառման և ուժեղացման. Տիրոջ վերականգնումն այն է, որ Աստված դառնում է մսեղի, մսեղին դառնում է կենդանարար Հոգի, իսկ կենդանարար Հոգին դառնում է յոթնապատիկ ուժեղացված Հոգի՝ կառուցելու համար եկեղեցին, որը դառնում է Քրիստոսի Մարմինը և ավարտունացնում է Նոր Երուսաղեմը.

1. Այն, որ Աստված դարձավ մսեղի, հենց «ամուրի» Աստված է, որ դարձավ մարմնացած Աստված և փրկագնող Աստված՝ Հվի 1:1, 14, 29:
2. Այն, որ մսեղին դարձավ կենդանարար Հոգի, իսկ կենդանարար Հոգին դարձավ յոթնապատիկ ուժեղացված Հոգի, հենց բաղադրյալ Աստված է, որ դարձավ ուժեղացված Աստված՝ ներբնակվող Աստված լինելու համար՝ Ա Կրթ 15:45 բ, Հյտ 1:4, 3:1, 4:5, 5:6:

3. Այն, որ կառուցված եկեղեցին դառնում է Քրիստոսի Մարմինը, և որն ավարտունացնում է Նոր Երուսաղեմը, հենց ընդհանրական դարձած Աստված է՝ Քրիստոս-Մարմինը, որն ավարտունացնում է Նոր Երուսաղեմը՝ պատրաստված ու ավարտունացած Եռամեկ Աստծու և պատրաստված ու ավարտունացած եռամաս եկեղեցու վերջնական միությունը, միաձուլումը և ընդհանրականությունը՝ Հվի 17:21, Եփս 4:4-6, 16, Կղս 2:19, Հյտ 19:7-9, 21:2, 9-10:

IV. Տիրոջ ներկայիս վերականգնումը Քրիստոս-Մարմնի վերականգնումն է (Ա Կրթ 12:12-ի «Քրիստոս»-ի) եկեղեցական կյանքում. Քրիստոս-Մարմինը ընդհանրական դարձած Աստված է. ուստի Քրիստոսի մեջ քայլել նշանակում է քայլել Նրա՝ որպես Քրիստոս-Մարմնի մեջ, որն ընդհանրական դարձած Աստված է՝ Ա Կրթ 12:12-13, Գրծ 9:4-5, 15, Կղս 2:19, Եփս 4:1-6, 15-16, Հվի 14:23, 17:21.

Ա. Ա Կրթ 12:12-ն ասում է. « Քանի որ ինչպես և մարմինը մեկ է և շատ անդամներ ունի, սակայն մարմնի բոլոր անդամները, շատ լինելով, մեկ մարմին են, այդպես էլ Քրիստոսը». «Քրիստոսը» այս խոսքում ոչ թե անհատական Քրիստոսն է, այլ ընդհանրական Քրիստոսը, այն Քրիստոսը, ով Իր բոլոր անդամների հետ ընդհանրականություն է կազմել:

Բ. Սա այն ընդհանրական «Ինձ»-ն է, որին Պողոս առաքյալը տեսավ դեպի Քրիստոսն իր հնազանդեցվող դարձի ժամանակ. նա տեսավ, որ Տեր Հիսուսը և Նրա հավատացյալները մի մեծ անձ են՝ սքանչելի «Ինձ»-ը՝ Գրծ 9:3-5:

Գ. Մենք պետք է տեսնենք, որ Քրիստոսը, ում մեջ պետք է քայլենք այսօր, ոչ միայն անհատական Քրիստոսն է, այլև հրաշալի «Ինձ»-ը՝ Քրիստոս-Մարմինը, ով ընդհանրական դարձած Աստված է:

Դ. Քրիստոսին ընդունել ու Քրիստոսի մեջ քայլել նշանակում է ընդունել ու քայլել -Քրիստոս-Մարմնի մեջ, քանի որ Քրիստոսն այսօր ընդհանրական Մարմին է. Քրիստոսն է այլևս ոչ միայն անհատական Քրիստոսն է, այլև ընդհանրական Քրիստոսը՝ Գլուխը Մարմնի հետ. մեր քրիստոնեական կյանքում մեծ փոփոխություն է առաջանում, երբ քայլում ենք ընդհանրական Քրիստոսի մեջ:

Ե. Տիրոջ վերականգնումը «Քրիստոսացման» վերականգնումն է, բացառիկ և ամբողջական Քրիստոսի անձի վերականգնումը՝ եկեղեցական կյանքում Քրիստոս-Մարմնի իրականությանը հասնելու համար՝ Ա Թսղ 5:23, Փլպ 1:19-21ա, 3:8-14, Բ Կրթ 2:10, Կղս 3:10-11:

Զ. Այսօր Տերը եկեղեցական կյանքում կառուցում է Քրիստոս-Մարմինը. Քրիստոս-Մարմնում Քրիստոսը ներդրվում է Իր բոլոր անդամների մեջ, և Նրա բոլոր անդամները ներդրվում են Իր մեջ՝ Քրիստոսի արտահայտության համար կյանքում աճելով և կյանքում փոխակերպվելով՝ 2:19, Հռմ 12:2, Բ Կրթ 3:18, Ա Կրթ 12:12-13.

1. Քրիստոս-Մարմնի մեջ մենք վայելում ենք Քրիստոսին՝ որպես ամեն ինչի՝ խխ. 3բ, 13.

2. Քրիստոս-Մարմնի մեջ կա բոլոր անդամների գործառույթը՝ խխ. 14-22:
3. Քրիստոս-Մարմնի մեջ անդամները Եռամեկ Աստծու միասնության մեջ միաձուլվում են իրար՝ խխ. 23-27, Հվի 17:21, Եփս 4:1-6:

V. Որպեսզի տիրենք համաբովանդակ Քրիստոսին ու քայլենք Նրա՝ որպես բարի երկրի իրականության մեջ, պետք է տեսնենք, որ Տիրոջ ներկայությունը մեզ համար ամեն ինչ է թե՛ Տիրոջ մեջ մեր ապրած կյանքում, թե՛ Տիրոջ մեջ մեր արած աշխատանքում. Ելից 33:12-17-ում Մովսեսն Աստծու հետ գործարք էր կնքում, որ Նրա ներկայությունը գնա իր հետ և Աստծու ժողովրդի հետ. Աստված պատասխանեց՝ ասելով. «Իմ ներկայությունը քեզ հետ կգնա, և Ես քեզ հանգիստ կտամ»՝ խ. 14.

Ա. Տերն ապրում է մեր մեջ, և ուր էլ որ գնանք, Նա կգնա, բայց արդյո՞ք Նրա ներկայությունը գնում է մեզ հետ. շատ անգամ Տերը կարող է օգնել մեզ, բայց մեզնից գոհ չլինել. մենք պետք է կառավարվենք Տիրոջ անմիջական, չմիջնորդավորված ներկայությամբ:

Բ. Տիրոջ ներկայությունը, Նրա ժպիտը Քրիստոսի՝ որպես բարի երկրի իրականության մեջ մտնելու և դրան տիրելու համար կառավարող սկզբունք է. Աստծու ներկայությունն այն ճանապարհն է՝ «քարտեզը», որը Նրա ժողովրդին ցույց է տալիս, թե նրանք ինչ ճանապարհը պետք է գնան:

Գ. Ըստ Ելիցում ցույց տրված նկարի՝ Տիրոջ ներկայությունը նրանց առջևից «ցերեկը գնում էր ամպի սյունով՝ նրանց ճանապարհին առաջնորդելու համար, իսկ գիշերը՝ կրակի սյունով՝ նրանց լույս տալու համար, որպեսզի ցերեկ ու գիշեր գնան: Ցերեկը ամպի սյունը ու գիշերը կրակի սյունը ժողովրդի առջևից չհեռացան»՝ 13:21-22.

1. Ըստ նախատիպերի՝ ամպը խորհրդապատկերում է Հոգուն (Ա Կրթ 10:1-2), իսկ կրակը, որ լուսավորելու համար է, խորհրդապատկերում է Աստծու Խոսքը (Սղմ 119:105, Երմ 23:29). ուստի Աստծու ներկայությունից բխող ակնթարթային, կենդանի առաջնորդությունը բխում է կա՛մ Հոգուց, կա՛մ Խոսքից:
2. Երկու սյուները խորհրդանշում են հենց Աստծուն, քանի որ Նա թե՛ Հոգին է, թե՛ Խոսքը (Հվի 4:24, 1:1). բացի դրանից՝ Խոսքը նաև Հոգին է (6:63, Եփս 6:17):
3. Ուստի Աստված, Խոսքը և Հոգին մեկ են՝ մեզ շարունակ առաջնորդելու և ուղղորդելու համար և ցերեկը, և գիշերը. քրիստոնյայի կյանքում ցերեկվա և գիշերվա միջև տարբերություն չկա, քանի որ կրակի սյան լույսը գիշերը դարձնում է ցերեկ:

Դ. Ելիցը նաև ցույց է տալիս, որ հենց Քրիստոսը՝ որպես Աստծու Հրեշտակը, առաջնորդում էր ժողովրդին. երբ Աստծու Հրեշտակը շարժվում էր, սյունը նույնպես շարժվում էր, ինչը ցույց է տալիս, որ Հրեշտակն ու սյունը մեկ էին. Քրիստոսն ու առաջնորդող Հոգին անբաժան են (14:19, Հվի 14:17-20, 16:13, Բ Կրթ 3:17, Հյտ 5:6). բացի դրանից, երբ նրանք, ովքեր հետևում են Տիրոջը, դիմակայության են բախվում, առաջնորդող լույսն

ինքնաբերաբար դառնում է պաշտպանող լույսը. սակայն հակառակորդների համար այս պաշտպանող լույսը դառնում է խավար (Ելք 14:20):

VI. Որպեսզի տիրենք համաբովանդակ Քրիստոսին ու քայլենք Նրա՝ որպես բարի երկրի իրականության մեջ, մենք պետք է ապրենք ու ծառայենք քահանայության իրականության մեջ՝ մեր կյանքում և ծառայության մեջ շատ ու հանգամանալի աղոթք անելով՝ Ա Պտ 2:5, 9, Կղս 4:2.

Ա. Արդյոք եկեղեցին կենդանի է, թարմ ու հարստացած, կախված է մի բանից. որ մենք շարունակ լցվենք Հոգով. որպեսզի շարունակ լցվենք Հոգով, պետք է լինենք այն անձինք, որոնք պատրաստակամ են, դատարկ են և աղոթում են՝ խ. 2, Փլպ 2:13, Մտթ 5:3, 8, Ղկս 1:53, Եփս 5:18:

Բ. Եկեղեցու կառուցման ազնվական աշխատանքի համար անհրաժեշտ իմաստությունը, հասկացողությունը, գիտելիքը և հմտությունը պետք է լինի Աստված Ինքը՝ որպես Հոգին. միայն Աստծու Հոգին կարող է մեր միջոցով կառուցել Իր սեփական բնակավայրը՝ Ելց 31:1-3, Զք 4:6:

Գ. Եթե բոլոր եկեղեցիների բոլոր սրբերը հաստատակամորեն աղոթեն, վերականգնումը մեծապես կհարստանա և կբարձրանա. բացի դրանից՝ սրբերը կվայելեն Տիրոջը, Նրա ներկայությունը և Նրա ակնթարթային ու մշտական օծումը. ամբողջ օրը նրանք կվայելեն Տիրոջ դեմքի ժպիտը, և Քրիստոսի կենդանի անձը կդառնա նրանց փորձառությունը և վայելքը:

© 2023 Living Stream Ministry